ՆՇԱՆԱՎՈՐ ԴՐԱՄԱԳԵՏԸ

(Զարեհ Պտուկյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Խ. Ա. ՄԱՐԻՇԵՂՅԱՆ

Հայագիտության զարգացման մեր օրերում Զարեհ Պտուկյանը իր մեծարժեք գործերով արդարև դասվում է հայ դրամագիտության երախտավորների շարքը։ Վիկտոր Լանգլուայից, Կղեմիս Սիպիլյանից, Էռնեստ Բաբելոնից, Կարապետ Բասմաջյանից ու նրանց ժամանակակիցներից հետո հայ դրամագիտության առաջ նոր խնդիրներ էին ծառացել։ Զարեհ Պտուկյանը եկավ նվիրելու իրեն այդ խնդիրների կատարմանը և նրա ջանքերի շնորհիվ առավել լայն ասպարեզ բացվեց հայկական ծագում ունեցող հին ու միջնադարյան դրամների քննության համար։ XX դարի կեսերին թանգարաններում հայկական անցյալին վերաբերող նոր դրամագիտական նյութեր էին հավաքվել, որոնք չէին մտել դիտական լայն շրջանառության մեջ։ Ռիտակցելով այն հսկայական աշխատանքը, որ կատարվել էր հունա-հռոմեական, բյուզանդական, արևելյան և այլ ծագում ունեցող դրամների քննության ուղղություններով, Զարեհ Պտուկյանը չէր կարող չտեսնել, թե դեռևս որքան անմշակ էին մնացել հայ ժողովրդի հարուստ պատմության տարբեր փուլերին վերաբերող դրամագիտական վկայությունները։ Եվ Զարեհ Պտուկյանը ձեռնարկեց իր պրպտումները՝ սկսելով Կիլիկիայի հայկական դրամներից։ Այդպես էին վարվել և նրա նախորդները։ 1945 թ. հետո հրատարակվեցին նրա անդրանիկ հոդվածները հայերեն և անգլերեն լեզուներով։ Այնուհետև Պտուկյանը շարունակեց իր հետազոտությունները կիլիկյան դրամների ուղղությամբ և ի վերջո, 1962 թ., Ամերիկայի դրամագիտական ընկերության հրատարակությամբ, անգլերեն լեզվով լույս տեսավ Զարեհ Պտուկյանի «Կիլիկյան Հայաստանի դրամները» ստվարածավալ մենագրությունը, որի տեսական մասը հայերեն թարգմանեցին և անգլերեն կորպուսի հետ լույս ընծայեցին Վիեննայի Մխիթարյանները՝ 1963 թ.։



Զարեհ Պտուկյանը առաջինն էր, որ կարողացավ, համաշխարհային ա-

ռումով, ի մի հավաքել հայկական դրամների մեծ ու փոքր ժողովածուները և, հենվելով փաստացի նյութի վրա, կուռ դասակարգումով ներկայացնել Կիլիկիայի հայոց թե՛ իշխանական և թե՛ թագավորական շրջանների դրամական միավորները։ Նա մշակեց կիլիկյան դրամների մի այնպիսի քանակություն, որպիսին չունեին իրենց տրամադրության տակ այդ գործով զբաղվող նրա բոլոր նախորդները։ Իր եզրահանգումները Զ. Պտուկյանը շարադրեց ելնելով ոչ թե գրականության հայթայթած նյութից, այլ ավելի քան տասը հազար ոսկե, արծաթե ու պղնձե դրամների պատկերագրության ու կշռային չափերի տվյալներից։ Այդ նպատակի համար նա իր ձեռքի տակ ուներ քննության ենթակա բոլոր դրամական միավորների նմանահանությունները՝ ստացված իր իսկ հնարած պատճենահան գործիքով, մի հիանալի ու պարզ միջոց, որով մեկ ժամում կարելի է ստանալ մինչև 100 դրամի պատկերագրության մանրամասները մետաղե թղթի վրա։ Զարեհ Պտուկյանը հիմնովին ցրեց այն շփոթը, որ առաջացել էր Կիլիկյան Հայաստանի ոսկե դրամների վավերականության մասին և փաստեց նրանց իսկությունը։ Ի տարբերություն անցյալի, նա առավել ծավալուն քննեց և ներկայացրեց տնտեսական բնույթի վկայություններ Կիլիկյան Հայաստանի վաճառականության մասին։ Հիրավի, առանց ապրանքափոխանակության տվյալների կարող էին անըմբռնելի դառնալ հայկական քաղաքների առնչությունները դրամական շրջանառության միջազգային ոլորտում։

Կիլիկիայի հայության մեջ զանազան դրամների համար ընդունված անվանումների մասին նրա տված բացատրությունները (քաղված պատմիչներից և հայագիտական աշխատություններից) դրամագիտական բառարանի նշանակություն ունեցան։ Մանրամասնորեն ներկայացնելով Կիլիկիայի հայոց դրամների պատկերագրության տվյալները, Զարեհ Պտուկյանը շատ բարձր մակարդակով տվեց Ռուբինյան դրամների չափագիտության հիմունքները՝ արտահայտելով դրանք հատուկ աղյուսակներով։

Դրամագիտական մտքի զարգացման պահանջով այդ նշանավոր աշխատությունը վերջերս վերահրատարակվեց (1979) և «Կիլիկյան Հայաստանի դրամները» գրքի այդ երկրորդ (վերամշակված) հրատարակությունը էապես հաստատեց միջազգային առումով նրա մնայուն տեղը դրամագիտության մեջ։

Այնուհետև դրամագետը միջնադարից անցավ անտիկ շրջանին և իր ուշադրությունը բևեռեց հայոց Արտաշեսյան թագավորության դրամների վրա։ Հին հայկական պետականության այդ կարևոր շրջանի մետաղե դրամների քննությունը շատ ավելի մեծ ջանքեր էր պահանջում, եթե նկատի ունենանք, որ անմիջական վկայություններ քիչ են պահպանվել և նրանց մասին եղած աշխատությունները ներկայացնում են առավելապես Փարիզի ազգային մատենադարանում և Բրիտանական թանգարանում հավաքված նմուշները, չհաշված համեմատաբար փոքր ժողովածուները։ Մինչդեռ XX դարի երրորդ քառորդին արդեն բավական նոր նյութեր էին հայտնաբերվել, որոնք հատուկենտ օրինակներով ցրված էին աշխարհով մեկ։ Պետք էր հավաքել այդ օրինակները, գումարել դրանք հնուց հայտնի նյութերին և ելնելով պատմագիտության առաջընթացի արդյունքներից՝ նորովի քննության ենթարկել։ Հիմք ընդունելով նախ և առաջ իր հավաքած հին հայկական դրամները, Զարեհ Պտուկյանը երախտագիտության ազնիվ զգացումով ուսումնասիրեց անցյալի բոլոր գործերը և ստեղծեց արտաշեսյան դրամների դասակարգման իր նոր սկզբունքը։ Վեր-

չինիս հիմնական դրույթները նախապես հրատարակվեցին անգլերեն լեզվով[1], այնուհետև Մխիթարյանները առանձին գրքով լույս ընծայեցին այն հայերեն[2]։

Արտաշեսյանների պետությունը նշանավոր դեր էր խաղացել Մերձավոր Արևելքում մ. թ. ա. II—I դդ.։ Արդեն հավաքված նոր նյութերը՝ արտաշեսյան դրամները, Զարեհ Պտուկյանին հնարավորություն ընձեռեցին հիմնովին վերանայելու անցյալում ընդունված դասակարգումը և լրացնելու այն բացերը, որ դիտվում էին այդ գործում։ Հաջողվեց բացահայտել Տիգրան I-ի (մ. թ. ա. 123—96) գահակալության տարիների դրամները, ցույց տալ նրանց պատկերագրությանը բնորոշ տվյալները, որոնք իսկական հայտնություն եղան դրամագիտության մեջ։ Զարեհ Պտուկյանը ներկայացրեց ոչ միայն Տիգրան Մեծի գահակալության տարիներին (մ. թ. ա. 95—55) թողարկված պղնձե դրամների տարբերակները, այլև վերջին Արտաշեսյան արքաներին պատկանող դրամական միավորները։ Կարևոր նշանակություն ունեցան մասնավորապես Արտաշես II (մ. թ. ա. 30—20), Արտավազդ III (մ. թ.ա 5—2), Տիգրան IV և Էրատո (մ. թ. ա. 8—5 և մ. թ. ա. 2—մ. թ. 1) և, ի վերջո Տիգրան V (մոտ 6 թ.) Արտաշեսյան արքաների պատկերներով մետաղե դրամների հայտնագործումները։ Նորահայտ օրինակներով համալրվեցին Տիգրան III (մ. թ. ա. 20—8) և Տիգրան IV թագավորների դրամների շարքերը։ Այսօր արդեն, երբ սեղանի գիրք է դարձել Զարեհ Պտուկյանի «Արտաշեսյան հարստության դրամները» մենագրությունը, որի անգլերեն հրատարակությունը (1978 թ.) մեծապես ընդարձակեց նրա ընթերցողների շրջանակները, կարելի է արդարև նշել, որ լայն ճանապարհ է բացվել հայոց հին դրամների քննության համար։

Օգտվելով անտիկ հեղինակներից (Հերոդոտ, Ստրաբոն, Քսենոփոն, Պոլիբիոս), ինչպես նաև Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Կ. Թումանոֆի և ուրիշների գործերից, Զ. Պտուկյանը միաժամանակ համեմատական պրպտումներ կատարեց թանգարաններում և առանձին հնասերների մոտ պահվող դրամագիտական նյութերի շուրջ։ Նա իր գրքով ընթերցողին ներկայացրել է Արտաշեսյանների տիրապետության քարտեզը և նրանց ծագումնաբանության սխեման, որից հետո անցել է բուն նյութին՝ տալով դրամների պատկերագրության տվյալները, խորագրերը, մենագրերը, կշռային չափերը, ինչպես նաև հիշատակություններ յուրաքանչյուր միավորի պահպանության վայրի մասին։ Ութ պատկերատախտակներով ներկայացված են դրամների (168) երկու կողմերին վերաբերող լուսանկարները բնական չափերով։ Ուշագրավ է, որ գրքի վերջին էջերում զետեղված են արդեն մ. թ. I դարի սկզբի հայ-պարթևական և հայ-հռոմեական առնչություններին վերաբերող դրամագիտական տվյալները։ Հայտնի է, որ Հռոմի շահերի թելադրանքով զորավար Գերմանիկոսի կողմից 18 թ. հայոց գահին թագավոր է կարգվում Պոնտոսի արքայազն Զենոնը։ Վերջինս հանդես է գալիս հայոց արքայական տոհմին հատուկ Արտաշես անունով։ Հեղինակը իրավացիորեն ցույց է տվել, որ այդ ժամանակներում Արտաշեսյանների քաղաքական իշխանությունը սպառվել էր և երկիրը ենթակա էր դարձել հռոմեական զավթիչներին։ Սակայն, բացի ընդհանուր կարգի կայսե-

---

[1] Paul Z. Bedoukian, A Classification of the Coins of the Artaxiad Dinasty of Armenia, „The American Numismatic Society. Museum Notes", 14 (1968).

[2] Զարեհ Պտուկյան, Արտաշեսյան հարստության դրամները, Ազգային Մատենադարան, հատ. 210, Վիեննա, 1969։

բական գրամներից, բուն Հռոմում թողարկվել են ոսկե, արծաթե ու պղնձե դրամներ, որոնց վրա դրոշմվել են Հայաստանին վերաբերող պատկերներ ու գրություններ (լատիներեն)։ Նկատի ունենալով այդ կարգի գրամների նշանակությունը հայ-հռոմեական առնչությունների լուսաբանման համար, Զարեհ Պտուկյանը Վիեննայի Միխիթարյան միաբանության միջոցով հրատարակեց իր մենագրությունը «Հայաստանի վերաբերյալ հռոմեական գրամներ և մեդալիոններ» վերնագրով[3]։ Աշխարհով մեկ ցրված դրամների պատկերագրության ու չափագիտության տվյալները հավաքել և ամփոփել մի գրքի մեջ՝ էապես կարևոր աղբյուրագիտական գործ է։ Հայաստանին վերաբերող հռոմեական պատկերագրության նյութերը բազմաթիվ հրատարակություններով հայտնի էին դեռևս անցյալ դարից, բայց ներկայացված էին հռոմեական դրամների տարբեր հավաքածուներում։ Զարեհ Պտուկյանը, սեփական ջանքերով հավաքած նյութերի վրա հենվելով և լայնորեն օգտվելով այլ ժողովածուներից, տվեց ինչպես նախակայսերական, այնպես էլ կայսերական ժամանակներում թողարկված՝ Հայաստանին վերաբերող հռոմեական դրամների ու մեդալիոնների պատկերագրության տվյալները։ Վերջիններիս շարքին է նա դասել հայոց գահի վրա հռոմեական դրածո, այսպես կոչված «Նոր Տիգրանի» և Օգոստոս Օկտավիանոսի պատկերներով պղնձե դրամը, որի վրա հայոց արքան պատկերված է արտաշեսյան հինավուրց թագով և տեղական ավանդույթներին բնորոշ՝ միապետի անվան ու տիտղոսի հունարեն արձանագրություններով։

Զ. Պտուկյանը իրավացիորեն նշում է, որ Հայաստանին վերաբերող վաղագույն հռոմեական դրամները շրջանառության մեջ են մտել մ. թ. ա. 35—31 թթ. և հիշատակում է այն օրերը, երբ Մարկոս Անտոնիոսի զորքերը գրավել էին Արտաշատը, ձերբակալել հայոց արքա Արտավազդ II-ին և ընտանյոք աքսորել Եգիպտոս (Ալեքսանդրիա)։ Այնուհետև Զ. Պտուկյանը ներկայացրել է I—II դդ. թողարկված Օգոստոս Օկտավիանոսի, Ներոնի, Տրայանոսի, Անտոնինոս Պիոսի, Մարկոս Ավրելիոսի, Լուկիոս Վերոսի և Կոմմոդոսի դիմաքանդակներով տարբեր դրամներ ու շքադրամներ, որոնց վրա դրոշմված պատկերներն ու արձանագրությունները պատմում են հռոմեական զավթիչների սին փառքի մասին՝ Հայաստանի դեմ տարած նրանց հաղթանակների առթիվ։ Շուրջ երկու հարյուր տարի ընդգրկող այդ ժամանակահատվածը Հայաստանի համար Արշակունյաց թագավորության ծագման ու զարգացման դարաշրջանն էր, երբ հայոց երկիրը գտնվում էր Արևելքի ու Արևմուտքի երկու հզոր տիրակալությունների՝ Հռոմեական կայսրության ու Պարթևական թագավորության միջև, որոնց զորքերը հաճախ բախվում էին հայկական հողի վրա։ Զարեհ Պտուկյանը վարպետորեն ցույց տվեց հռոմեական այդ դրամների լատիներեն համառոտագրությունների ընթերցման կարգը, պատկերների իմաստը և ընդհանրապես պատկերագրության մանրամասնությունների նկատմամբ հանդես բերեց հմուտ դրամագետին բնորոշ նրբանկատություն։

Գիտական շրջաններում գնալով ծավալվում է հետաքրքրությունը Զարեհ Պտուկյանի աշխատությունների նկատմամբ։ Եվրոպական նշանավոր պարբերականները հաճախ են իրենց էջերը տրամադրում Զ. Պտուկյանի հոդվածնե-

---

3 Ազգային Մատենադարան, հատ. 215, Վիեննա, 1971, էջ 212+38 պատկերատախտակներ։

ին։ Վիեննայում հայերեն լեզվով Մխիթարյանները շարունակում են հրատարակել նրա դրամագիտական գործերը՝ նվիրված ինչպես Կիլիկիայի, այնպես էլ Մեծ Հայքի պատմության հարցերին։ Հայերենից բացի այդ ստեղծագործությունները նախապես հրապարակ են գալիս անգլերեն լեզվով ամերիկյան ու եվրոպական գիտական տարեգրքերում։ Կարևոր նշանակություն ունեցան Զ. Պտուկյանի քննությունները կիլիկյան Հայաստանի վերջին թագավորների պղնձե դրամների, արաբերեն գրություններով կրկնադրոշմ մի քանի հայկական դրամների, Արտաշեսյան վերջին գահակալների դրամների և շատ այլ հարցերի մասին։ Նա գործուն մասնակցություն է ունեցել դրամագիտական միջազգային կարևոր միջոցառումներին։ 1971 թ. Փարիզում գործող հայագիտական հանդեսը իր ութերորդ համարում հրատարակեց Զարեհ Պտուկյանի աշխատությունը՝ «Միջնադարի հայկական դրամները» վերնագրով (անգլերեն)։ Այդ ծավալուն հոդվածում նա ամփոփ ձևով նորովի ներկայացրեց ոչ միայն Կիլիկիայի հայկական դրամների հիմնական խմբերը՝ նրանց պատկերագրության բնորոշ տվյալներով, կապված երկրի քաղաքական պատմության փուլերի հետ, այլև մայր Հայաստանում թողարկված հայերեն գրերով երկու բացառիկ դրամների մասին իր բացատրությունները։ Դրանցից մեկը Բագրատունյաց Լոռվա Կյուրիկե Կյուրապաղատի անվան և տիտղոսի հայերեն արձանագրությամբ, XI դարում թողարկված հազվագյուտ դրամն է, իսկ մյուսը՝ Հուլաղույան Աբաղա խանի (1265—1282) գահակալության տարիներին դրվագված, ույղուրերեն, արաբերեն և հայերեն գրություններով, նույնպես պղնձե դրամն է։ Ըստ էության «Միջնադարի հայկական դրամները» վերնագիրը կրող հիշյալ աշխատությունը դասվում է Զ. Պտուկյանի մենագրությունների շարքը և մեծապես նպաստում հայ դրամագիտության առաջընթացին։

Զարեհ Պտուկյանի աշխատությունների ընդհանուր ցուցակը կարող է որոշակի պատկերացում տալ ընթերցողին նրա հետաքրքրությունների ուղղության և բեղուն գործունեության մասին։ Սակայն գիտության անխոնջ մշակը սոսկ քննող ու շարադրող չէ, այլ բյուրավոր թելերով կապված է տարբեր թանգարանների ու մասնագետների հետ և մեծապես նպաստում է դրամագիտության զարգացմանը։ Շատ թանգարաններ Զարեհ Պտուկյանին են պարտական իրենց ունեցած լրացուցիչ նյութերով։ Եթե անդամ անտեսվեն եվրոպական ու ամերիկյան հիմնարկները, որոնց Զ. Պտուկյանը դրամագիտական նյութեր է տվել, ապա միայն Հայաստանի պատմության պետական թանգարանին պարգևած նրա դրամագիտական ժողովածուները փայլուն օրինակ են այն անմնացորդ նվիրումի, որ նա ցուցաբերել է այդ գործում։ Հիրավի, վերջին շուրջ 30 տարիների ընթացքում Զարեհ Պտուկյանը ավելի քան երկու հազար հին ու միջնադարյան արծաթե, ոսկե ու պղնձե դրամներով համալրել է Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտական ժողովածուները։ Կարելի է վստահորեն ասել, որ եթե այսօր բուն Հայաստանում ստեղծվել է Կիլիկիայի հայկական դրամների հարուստ ժողովածու, ապա այդ գործում մեծ է եղել նաև Զարեհ Պտուկյանի վաստակը։ Ավելին, Զ. Պտուկյանը ջանքեր չխնայեց օժտելու Հայաստանի թանգարանը հռոմեական, պարթևական ու բյուզանդական դրամներով։ Հռոմեականն ծագում ունեցող դրամներից նա Հայաստանի թանգարանին նվիրել է այնպիսի նմուշներ, որոնք հիշատակում են հայ-հռոմեական ռազմաքաղաքական կարևոր իրադարձությունները I—II դդ.։ Պարթևական դրամների գծով նա թանգարանին նվիրել է գրեթե բոլոր պարթև

գահակալների դրամներից առանձին նմուշներ։ Պետք է ասել, որ քչերին է հաջողվել նախաքրիստոնեական ժամանակներից ավելի քան 30 պարթև գահակալների պատկերներով դրամական միավորներ հավաքել։ Առանձնապես ուշագրավ են վաղ պարթևական Միհրդատ, Հրահատ, Արտաբան, Գոտարզ, Որոդես, Սանատրուկ, ինչպես նաև նրանց հաջորդներ Վոնոն, Վարդան, Վաղարշ արքաների և այլոց դրամները, որոնց կնիքները ստեղծվել են տարբեր վարպետների կողմից։

Եթե այսօր Հայաստանի պատմության պետական թանգարանում և նրա ցուցասրահներում կարելի է տեսնել հիանալի պահպանվածությամբ պարթևական գրեթե բոլոր գահակալների դիմաքանդակները, իսկ դա անհրաժեշտ է նրանց, ովքեր հետաքրքրվում են Պարթևաստանի պատմությամբ, ապա դա ևս հնարավոր է դարձել Զարեհ Պտուկյանի նվիրած պարթևական դրամների հարուստ ժողովածուի շնորհիվ։ Իր նվիրատվություններով Զարեհ Պտուկյանը շեշտել է նաև բյուզանդական դրամների հավաքման և ուսումնասիրման կարևորությունը։ Հայտնի է, որ Բագրատունյաց թագավորության վերջին ժամանակներում Հայաստանում լայն տարածում են ունեցել Բյուզանդական կայսրության դրամները։ Զարեհ Պտուկյանը Հայաստանի պատմության պետական թանգարանին նվիրել է շուրջ 25 կայսրների պատկերներով 70-ից ավելի ոսկե բյուզանդական դրամներ, որոնցից ամենահինը վերաբերում է V դարին, իսկ նորագույնը՝ XIII դարի սկզբին։ Դրանց հետ միասին նա նվիրել է XI—XII դդ. բյուզանդական հազվագյուտ արծաթե դրամներ։ Հայտնի է, որ հենց այդ դարերում Մերձավոր Արևելքի երկրներում կանգ էր առել արծաթ դրամների թողարկումը։ Հայաստանում այդ երևույթը լրիվ դրսևորվել էր XII դարում։ Սակայն ի տարբերություն Հայաստանի և Իրանի, Բյուզանդական կայսրությունը շարունակում էր արծաթե դրամներ թողարկել։ Հայաստանի պատմության թանգարանին Զ. Պտուկյանի նվիրած արծաթե բյուզանդական դրամները կարևոր պատմական վկայություններ են փաստելու համար այն ներքին առանձնահատկությունները, որ եղել են դրամագործության մեջ այսպես կոչված «արծաթի ճգնաժամի» ժամանակներում։ Հազվագյուտ արծաթե դրամներից բացի բյուզանդական պղնձե դրամների բազմաթիվ նմուշներ է նվիրել Հայաստանի թանգարանին Զարեհ Պտուկյանը։ Դրանցով ներկայացված են շուրջ 40 գահակալների տարիներին թողարկված բյուզանդական ֆոլիսների բնորոշ տեսակները։ Քաջ գիտակցելով, որ Հայաստանը իր հնություններով, Էջմիածնի հնամյա վանքով մի յուրօրինակ թանգարան է բաց երկնքի տակ, նա կիլիկյան հայոց դրամների ևս մի բովանդակ ժողովածու էլ նվիրել է Էջմիածնի Մայր աթոռի հնադարանին։

Նշանակալից է Զ. Պտուկյանի վաստակը նաև նոր հայկական մեդալիոնների ստեղծման գործում, մասնավորապես «Սուրբ Վարդան» եկեղեցու կառուցման (Նյու Յորքում) և Կոմիտասի ծննդյան 100-ամյակի տոնակատարության առիթներով։ Դրանք լավագույնները եղան ժամանակակից հայկական մեդալիոնների շարքում։

Հնագիտական և ազգագրական նյութերը գնահատող, նրանց կորստից փրկող, միշտ որոնող, կենսահարուստ մտքով օժտված, աշխատանքի մեջ անհոգնելի Զարեհ Պտուկյանը անձնական օրինակ է որպես նվիրյալ գիտության և հայրենիքին։

ВИДНЫЙ НУМИЗМАТ

(К 70-летию со дня рождения Зарэ Птукяна)

Доктор историч. наук Х. А. МУШЕГЯН

(Резюме)

В развитии арменоведения заметную роль сыграли труды профессора Зарэ Птукяна (США, Нью-Йорк)—создателя «Корпуса киликийских монет». Более чем тридцать лет он изучает нумизматический материал армянского происхождения, который ныне хранится в музеях разных стран. Благодаря Зарэ Птукяну историки, нумизматы, археологи, этнографы и другие специалисты получили важные данные относительно классификации и хронологии монет династий Арташесидов, Рубенидов и Хетумидов. Значительным вкладом в нумизматику следует считать также монографию Птукяна, посвященную описанию римских монет. С появлением в свет нумизматических статей и монографий З. Птукяна (Paul Z. Bedoukian), как на английском, так и на армянском языках, открывается новый этап изучения нумизматических памятников Армении. За последние тридцать лет ученый принес в дар многим музеям, в том числе Государственному музею истории Армении, ценные коллекции античных и средневековых монет, а также научную литературу.